ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 հոկտեմբերի 2023 թվականի թիվ 266 - Ա

ԶՈՀՎԱԾ /ՄԱՀԱՑԱԾ/ ԿԱՄ ՀԱՇՄԱՆԴԱՄ ԴԱՐՁԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ /ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ/ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹՆԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ, ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 5-Ի ԹԻՎ 107-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» թիվ 1419-Ն որոշման 15-րդ կետը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել զոհված /մահացած/ կամ հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների/ ընտանիքներին բնակարանային հաշվառման ընդգրկելու նպատակով համայնքների կողմից կազմված փաստաթղթերի փաթեթները ուսումնասիրելու, ամփոփ ցուցակները կազմելու և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն ներկայացնելու համար ստեղծված հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2021 թվականի ապրիլի 5-ի «Զոհված /մահացած/ կամ հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների/ընտանիքների բնակարանային պայմանները

ուսումնասիրելու և ստուգելու նպատակով հանձնաժողովի նոր կազմ հաստատելու և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2017 թվականի հունիսի 9-ի թիվ 24-Ա կարգադրությունը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 107-Ա որոշումը:

Մարզպետ՝ Հ.ՂԱԼՈՒՄՅԱՆ

06.10.2023

X

2023թ.հոկտեմբերի 5
ք.Իջևան

«Հավելված»
ՀՀ Տավուշի մարզպետի
05 հոկտեմբերի 2023թ. թիվ 266 - Ա որոշման

ԶՈՀՎԱԾ /ՄԱՀԱՑԱԾ/ ԿԱՄ ՀԱՇՄԱՆԴԱՄ ԴԱՐՁԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ /ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ/ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹՆԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ, ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

Ֆ.Ափինյան - հանձնաժողովի նախագահ, ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի տեղակալ,

Ա.Գալստյան - ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ,

Ա.Բաբլումյան - ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ

Գ.Մելիքբեկյան - ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ,

Ն.Ճաղարյան - ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության գլխավոր մասնագետ:

Գլխավոր քարտուղար՝ Ա.Գևորգյան

06.10.2023

ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN ARMAN 2412760241